

բանջարով, Ոմանք շինում էին նեղ ձորակի մէջ մատուռ քաղցրահամ աղբիւրի մօտ, որ Սրբելեանի ժամանակ Ոււուու էր կոչվում: Ուր կային նորանց բժշկարար և հրաշագործ գերեզմանները: Ոմանք իւրեանց բնակութեան համար շինեցին խորան միւս արձակ ձորում, որ Հին վանք էին կոչում: Ոմանք ևս ցիր և ցան, այս և այն տեղ էին բնակում: Բայց բոլոր խոտաճարակների բուռն տեղը և եկեղեցին, ինչպէս վերը յիշուեց, էին այժմեան Քարկոփի տեղը, Արաստամուռի գիւղի մօտ:

(Տարաւանիւն)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 30 կատարուեցաւ Ս. Աթոռոյս ձեմարանի փերորդ տարեգարձը հանդիսաւոր կերպով: Ս. պատարագից յետ խուռն բազմութեան ներկայութեամբ, Աթոռոյս միաբանութիւնը, ձեմարանի ուսուցիչք ու աշակերտք դուրս գալով եկեղեցուց կատարեցին հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի գերեզմանի վերայ: Ապա գնացին ձեմարան, որոյ հանդիսարանը զարդարած էր ծաղիկներով: Հանդիսագիրն էր Մայր Աթոռոյս աւագ լուսարար Երեմիա Սրբագանը: ձեմարանիս տեսուչ Արժ. Հայր Նահապետը կարդաց 188⁸/₉ ուսումնական տարուայ հաշիւը: Իսկ ուսուցիչ պ. Ս. Լիսիցեանը կարդաց ճառ ձեմարանի նշանակութեան և այն յուսոյ մասին, որ ունի հայ եկեղեցական վարչութիւնն և հայ ազգը նորա վերայ: Երգուեցան շարական ու ազգային երգեր էլ: Գեր. Սրբազան Երեմիան վերջ դրեց հանդիսին համառօտ—ազգու ատենաբանութեամբ, որոյ իմաստն էր թէ մեծ մարդիկ անմահ են իրանց գործերով, թէ և մարմնով մեռնում են: Վերջացրեց իւր ատենաբանութիւնն հանգիստ մաղթելով հոգւոյ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի և երկար կեանք ներկայ Տէր Տէր Մակար Վեհափառ Հայրապետին, պաշտպանի

և խնամատարի ձեմարանիս: Պահպանիչով և օրհնութեամբ ներկայ եղող խուռն բազմութեան հանդիսականաց, որոնք ուխտ եկած էին Ս. Աթոռս հեռաւոր տեղերից, վերջացաւ առաւօտեան հանդէսն: Երեկոյեան ձեմարանի ճակատն և հիւսիսային բակը լուսաւորուած էր գոյն զգոյն լապտերներով և մի խումբ երգեցիկ աշակերտաց երգում էին երգեր: Կար և համեստ հրախաղութիւն: Ձեմարանի ընդարձակ բակը լիքն էր բազմութեամբ: Ութը ժամին վերջացաւ այս հանդէսն և ուսուցիչք ու աշակերտք մտան ձեմարանի մի սերտարանն, ուր աշակերտաց միբզ բաժանուեցաւ և թէյ մատակարարուեցաւ: Այս տեղ ևս խօսուեցան ճառեր թէ ուսուցչաց և թէ աշակերտաց կողմից:

Մշակի 96 համարում Կ. ստորագրութեամբ հրատարակած լուրը Ս. Աթոռոյս Գրադարանի և Թանգարանի մասին, ամենքին զարմանք պատճառեց այստեղ: Եւ այդ իրաւամբ, որովհետեւ մինչդեռ ամեն ջանք գործ դրած է մատենագարանն ապահով և բարեկարգ վիճակի մէջ պահելու և պահվում է մեծ խնամքով ու զգուշութեամբ, պ. լրատուի անփաստ խօսքով նա մատնուած է անհոգութեան և կորուստների: Ս. Աթոռոյս ձեռագիրները ընկուզեայ պահարաններում դարսած են, իւրաքանչիւրն իւր թուահամարով համեմատ ցուցակին, խոնաւութիւնից և հրդեհից բոլորովին ապահով սենեակներում, վերին յարկում, կից Վեհարանին: Սենեակները գրեթէ ամեն օր մաքրուում են ի ներկայութեան գրադարանապետի օգնական Սահակ Աբեղայի Ամատունւոյ:

Մատենագարանն ոչ թէ մի կորուստ չէ ունեցել յընթացս շատ տարիների, այլ և հարստացել է նշանաւոր նուէրներով բարեպաշտ և հասկացող անձանց, որոնք իրանց ձեռքն անցած ձեռագիրները ժամանակի ձախող հանգամանքներից ապահովելու համար ուղարկած են Ս. Աթոռոյս մատենագարանը:

Այսպէս հանգուցեալ Գանիէլ վարդապետ Շահնազարեանցի կազմած ցուցակից դուրս աւելացել են այլ ևս 700 ձեռագիրք և ոչ մէկը պակասած չէ: Առանց Վեհափառ Հայրապետի թոյլտուութեան ոչ միայն ձեռագիր դուրս տանել անհնար է, այլ և ոչ մի տող արտագրել որ և է ձեռագրից: Գրագարանն այնպիսի հսկողութեան ներքոյ է, որ միայն յոյժ ճարպիկ անհաւատարիմ այցելուներից կարող է կորուստ ունենալ, որպիսիք էլ դժուար թէ պատահեն: Իսկ պ. Կ. նման անձանց հաղորդածներն ոչ թէ ճշմարտութեան, այլ կամ խմբագրութիւնքը սխալեցնելու և կամ Ս. Աթոռիս պատիւը շոշափելու և նորա մատենադարանին վնասելու ցանկութեան միայն վերաբերելի են: Այդ պատիւն անբարեմտաց վայելելու միշտ տուած է:

Ա Ձ Դ

Ըստ բարձու Հրամանի 'Նորին Արքութեան Աւեհափառ Հայրապետի Լճգիս ծանուցանի թէ' այնոքիկ խնդրագիրք, որք մատուցեալք են 'Նորին Արքութեան զկնի անցեալ օգոստոս ամսոյ' վասն մուծանելոյ զանուանս խնդրատուացն յընդհանուր ցուցակ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց եկեղեցական— ծիսական ուսումնարանաց Հայոց, մնալոց են առանց հետեանաց ցվերջ ներկայ ուսումնական ամի, քանզի յիշեալ խնդրատուք համաձայն հրահանգութեան 'Նորին Արքութեան' տուեցելոյ թեմական 'Նախնորդաց' պարտ էին փութալ հասուցանել զխնդիրս իւրեանց առ 'Նորին Աւեհափառութիւնն ոչ անագան քան ց1 ն յունիսի անցելոյ':